Արձանագրություն N3

Մարտունու Ծննդատուն ՊՓԲԸ-ի ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով բժշկական սարքերի որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման նիստի

ք. Մարտունի

30 սեպտեմբեր 2019թ.
Ժամը՝ 15^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կ/կոնսուլտացիայի վարիչ	Աշոտ Հովհաննիսյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Բժիշկ լաբորանտ	Աննա Հակոբյան
	Տնտեսվար	Գոհար Գրիգորյան
	Գործավար	Լիլիթ Ալոյան
	Կ/Կ մանկաբարձուհի	Օֆելյա Մելքոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Սիրարափի Հովհաննիսայն

<u>Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին
2.Նիստի կասեցման մասին
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

1.Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին.

Ընդունել ի գիտություն, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը , Հայաստանի Հանրապետության պետական բյուջեյի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն չունի, ինչպես նաև ակտիվները գերազանցում են պարտավորությունները:

ՄՕՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնանաշման հարցման միջոցով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել ՝ իրենց որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերի II մասի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն մրցույթի տեխնիկական բնութագրի, սարքը պետք է ունենա հետևյալ օպցիաների ծրագրային հնարավորություն՝
-2D NT /Դաունի սինդրոմի մարկեր/
-3D, 4D, 5D
-Auto IMT
-ElastoScan
-DICOM

Ձեր կողմից ներկայացված Հավելված 3.1-ում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝

Սարքում հետևյալ ծրագրային փաթեթների առկայություն՝
-Auto NT
-Auto IMT
-DICOM

Սարքը կարող է հետագայում համալրվել հետևյալ ծրագրային փաթեթներով ՝
-3D, 4D, 4D
-C-Xlasto

Խնդրում ենք տրամադրել մանրամասն տեղեկատվություն Auto NT ծրագրի վերաբերյալ և ներկայացնել առաջարկված մոդելի տեխնիկական բրոշուրն, քանի որ ըստ Ձեր ներկայացված բնութագրի բացակայում են 2D NT /Դաունի սինդրոմի մարկեր/ և 5D ծրագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2.Նիստի կասեցման մասին

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի մասին 47-րդ կետի համաձայն կասեցնել նիստը `առաջարկելով Դիվանտ ՍՊԸ-ին հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթում տեղեկիկական բնութագրում առկա անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել :

3.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

ՄՕՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնանաշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հոկտեմբերի 2 -ին, ժամը 12 :00-ին <<Մարտուն Ծննդատուն>> ՊՓԲԸ-ի գնումների բաժնում՝ ք. Մարտունի , Գետափնյա 2/18:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝0:

Հանձնաժողովի նախագահ՝	Աշոտ Հովհաննիսյան	----------
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Աննա Հակոբյան	----------
	Գոհար Գրիգորյան	----------
	Լիլիթ Ալոյան	----------
	Օֆելյա Մելքոնյան	----------
Հանձնաժողովի քարտուղար՝	Սիրարփի Հովհաննիսյան	----------